Հաստատեմ
01.09.2021թ.

ՎԱՆԱՁՈՐԻ Ս. ՆԱԼՂԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 13 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

2021- 2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Տնօրենի մասնագիտացված աջակցությունների գծով տեղակալ՝

ՄԱՄՈՒԼՅԱՆ ԳԱՐԻԿ ԳՐԻՇԱՅԻ

1. Ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացում

№	Աշխատանքի բովանդակությունը	ժամկետ	Կատարողներ	Այլ նշումներ
1.	Վերակարգավորել աշակերտների և նրանց ընտանիքների սոցիալական պատկանելիության ցուցակները. ա/ սոցիալապես անապահով բ/ միակողմանի-երկկողմանի ծնողազուրկ գ/ զոհվածի ընտանիք դ/ 4 և ավելի անչափահաս ե/ բաժանված, լքված զ/ հաշմանդամ	սեպտեմբեր	կազմակերպիչ դասղեկներ	
2.	Ձեռքի տակ ունենալ հետևյալ ցուցակները. • Միտումնավոր բացակայողների • Աղանդավոր աշակերտների • Անկարգապահ վարքով աչքի ընկնողներ • Չառաջադիմող աշակերտներ • Ակտիվիստ, լիդեր աշակերտներ • Աշակերտների արտադպրոցական նախասիրությունների և զբաղվածության մասին տվյալներ	սեպտեմբեր հոկտեմբեր	ՄԿԱԳՏՏ կազմակերպիչ դասղեկներ	
3.	Ամեն օր հաշվառել աշակերտների հաճախումները:	ընթացիկ	ՄԿԱԳՏՏ կազմակերպիչ	
4.	Յուրաքանչյուր աշակերտի վերաբերյալ ունենալ անհրաժեշտ բոլոր տվյալները:	ընթացիկ	ՄԿԱԳՏՏ կազմակերպիչ դասղեկներ	
5.	Համագործակցել՝ ա/ Վանաձորի ՆԳ անչափահասների տեսչության հետ: Նրանց ներկայացուցիչներին հաճախակի հրավիրել դպրոց: Անցկացնել զրույց-զեկուցումներ տարբեր թեմաներով:	ընթացիկ	ՄԿԱԳՏՏ կազմակերպիչ դասղեկներ	
	բ/ Վանաձորի Զինկոմիսարիատի հետ: Բոլոր հնարավորություններն ստեղծել 10,11,12-րդ դասարանների աշակերտների հետ ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ աշխատանքներն իրականացնելուն:	ընթացիկ	զինղեկ դասղեկներ	
	գ/ Գուգարաց թեմի Վանաձորի եկեղեցիների, ՔԴԿ-ի հետ: Պայմաններ ստեղծել փոխադարձ աշխատանքների:	ընթացիկ	կազմակերպիչ Ս. Կուրղինյան	

	դ/ Վանաձորում, տարածքում գործող մանկապատանեկան կազմակերպությունների, մշակույթի և մարզադպրոցների հետ: ե/ Դպրոցական ոստիկանի հետ զ/ Արտակարգ իրավիճակների նախարարության Վանաձորի տարածք. հիմնարկների հետ	ընթացիկ	ՄԿԱԳՏՏ դասղեկներ կազմակերպիչ զինղեկ ՄԿԱԳՏՏ	
6.	Բացառել աղանդի, կենցաղային և այլ անհարգելի պատճառներով աշակերտների դպրոց չհաճախելը: Այս հարցում լինել խիստ հետևողական:	ընթացիկ	դասղեկներ կազմակերպիչ	
7.	Մշտապես կապ ստեղծել անհրաժեշտ ընտանիքների հետ: Սերտացնել դպրոց-ծնող-աշակերտ կապը:	ընթացիկ	ՄԿԱԳՏՏ կազմակերպիչ դասղեկներ	
8.	Սովորողների մեջ ձևավորել պատշաճ վարքագիծ և վարվելակերպ, նպաստել նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը, դաստիարակել մարդասիրություն և հայրենասիրություն	ընթացիկ	կազմակերպիչ դասղեկներ	
9.	Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ: Աջակցել դասղեկներին, ծնողներին:	ընթացիկ	ՄԿԱԳՏՏ Կազմակերպիչ	
10.	Կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը:	Ընթացիկ	ՄԿԱԳՏՏ Կազմակերպիչ	
11.	Միջոցներ ձեռնարկել անապահով աշակերտներին օգնություն ցուցաբերելու ուղղությամբ:	ընթացիկ	ՄԿԱԳՏՏ Կազմակերպիչ	
12.	Հսկողություն իրականացնել ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ:	ընթացիկ	ՄԿԱԳՏՏ Կազմակերպիչ	
13.	Աջակցել աշակերտների դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը: Անցկացնել դպրոցի աշակերտական խորհրդի նախագահի ընտրություններ: Կազմավորել Աշխորհուրդ և նպատակաուղղել աշխատանքները՝ կանոնադրական պահանջներին համապատասխ.	սեպտեմբեր	ՄԿԱԳՏՏ Կազմակերպիչ	

14.	Ապահովել սովորողների ինքնավարության, դասարանական մարմինների և ընտրական հանձնախմբի պարտականությունների կատարումը	ընթացիկ	ՄԿԱԳՏՏ Կազմակերպիչ	+
15.	Կազմակերպել և իրականացնել ուսումնական հաստատությունում կրթության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված միջոցառումները		ՄԿԱԳՏՏ կազմակերպիչ	կատարված է
16.	Ապահովել ուսումնական հաստատության և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը			
17.	Համագործակցել գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով	ընթացիկ		
18.	Մանկավարժական խորհուրդի հաստատմանը ներկայացնել ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները		ՄԿԱԳՏՏ կազմակերպիչ	+
19.	Միջոցներ ձեռնարկել երեխաների կյանքի և առողջության պահպանման համար			կատարված է
20.	Միջոցներ ձեռնարկել օրենքով սահմանված կարգով սանիտարահիգիենիկ վիճակի, անվտանգության տեխնիկայի ապահովման, սովորողների ու աշխատողների իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար		ՄԿԱԳՏՏ կազմակերպիչ	
21.	Ապահովել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի և տարածքային կառավարման մարմնի ՀՀ օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը	ընթացիկ		
22.	Ապահովել դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը			
23.	Ապահովել սովորողների սոցիալական պաշտպանվածությունը , օրինական իրավունքները և շահերը		ՄԿԱԳՏՏ կազմակերպիչ	+
24.	Տեղեկացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (կամ ընտանիքի) հայտնաբերման դեպքում եռօրյա ժամկետում տարածքն սպասարկող սոցիալական աջակցության տարածքային բաժնին			կատարված է
25.	Անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպել ուսումնական օգնություն Տնօրինությանը ներկայացնել սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի	ընթացիկ		

26.	Հսկողություն սահմանել ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության, վարքի վրա:	ընթացիկ	ՄԿԱԳՏՏ կազմակերպիչ	
27.	Կազմակերպել միջոցառումներ, որոնք պետք է նպաստեն գիտակցական կարգա-պահությանը և առաջադիմությանը:			
28.	Արտադասարանական-արտադպրոցական աշխատանքների կազմակերպում:		ՄԿԱԳՏՏ կազմակերպիչ	
29.	Դպրոցի տարածքի , դասասենյակների, շրջապատի բարեկարգում, կահավորում:			
30.	Բոլոր դասարաններում ունենալ ՀՀ խորհրդանիշերը՝ դրոշ, օրհներգ,զինանշան: Հասնել նրան, որ բոլոր աշակերտներն իմանան և երգեն օրհներգը:	ընթացիկ		
31.	Բոլոր դասարաններում ունենալ կազմակերպչական անկյուն, սահմանել աշակերտների հերթապահություն:			
32.	Հսկողության տակ պահել օրագրերը, գրքերը, դպրոցական գույքը: Հետևել դասարանների ջեռուցման ընթացքին:	ընթացիկ	Դասղեկներ	
33.	Ուշադրության կենտրոնում պահել դասարանների մաքրությունը: Կատարել նպատակային դասալսումներ:		ՄԿԱԳՏՏ կազմակերպիչ	
34.	Տանել աշխատանք՝ սովորողների դաստիա-րակվածության մակարդակի, հասարակական ակտիվության, դասղեկների աշխատանքի որակի, դաստիարակության գործընթացում ծնողների ներգրավվածության, ավանդական դպրոցական միջոցառումների որակի, սովորողների ֆիզիկական-առողջական վիճակի ուղղությամբ:	ընթացիկ		
35.	Խիստ ուշադրություն դարձնել այլ դպրոցներից ավագ դասարաններ եկած աշակերտներին: Հետևել նրանց կարգապահությանը: Հասնել նրան, որ ստեղծվի միասնական, համերաշխ կոլեկտիվ :		ՄԿԱԳՏՏ կազմակերպիչ	
36.	Համագործակցված աշխատանք տանել դպրոցի ոստիկանի , գրադարանավարի, կազմակերպիչի և հասարակական կառույցների հետ:			
37.	Կազմակերպել և ապահովել Աշխորհրդի և Ծնողխորհրդի համատեղ աշխատանքները:			

2. ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ

№	Աշխատանքի բովանդակությունը	ժամկետ	Կատարող-ներ	Այլ նշումներ
1.	Հանրակրթական դպրոցի, նրա ստորաբաժա- նումների, մեթոդմիավորումներին և մանկա-վարժական աշխատողներին օգնություն ցույց տալ ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում:	ընթացիկ	ՄԿԱԳՏՏ	
2.	Համագործակցել դպրոցի յուրաքանչյուր աշխատակցի հետ:	ընթացիկ	ՄԿԱԳՏ Տ	
3.	Կատարել աշխատանքի հատուկ բաժանում դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչի համար:	սեպտեմբեր	ՄԿԱԳՏ Տ	
4.	Կազմակերպել ուսուցիչների ամենօրյա հերթապահություն, գրաֆիկ:	ընթացիկ	ՄԿԱԳՏ Տ	
5.	Գրադարանի աշխատանքները ծառայեցնել ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը:	ընթացիկ	ՄԿԱԳՏ Տ Ս. Սյվազյան	
6.	Ընդհանրացնել և տարածել մանկավարժական աշխատանքի արդյունավետ փորձը, աջակցել ուսուցման նոր մեթոդների ներդրմանը, ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն			
7.	նվաճումներին	ընթացիկ	ՄԿԱԳՏ Տ	
8.	Ներկայացնել առաջարկություններ ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման ուղղությամբ			
	Համակարգել մասնագիտացված կրթական աջակցության ծառայությունները			

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍՂԵԿՆԵՐԻ ՀԵՏ

№	Աշխատանքի բովանդակությունը	ժամկետ	Կատարող-ներ	Այլ նշումներ
1.	Դասղեկների հետ տանել բազմաբովանդակ աշխատանք • Անհրաժեշտության դեպքում հրավիրել դասղեկական խորհրդակցություն • Լսել դասղեկների հաշվետվությունները • Դասղեկների համար կազմակերպել մեթոդական ու տեսական օգնություն: • Ուսումնասիրել և տնօրենի հաստատմանը ներկայացնել դասղեկի պլանները:	ընթացիկ	ՄԿԱԳՏՏ	Կատարված է
2.	Դասղեկը պետք է ունենա. • Դասղեկին համապատասխան անհրաժեշտ թղթապանակ • Գրառումների հատուկ օրագիր • Աշխատանքային պլան • Աշակերտներին և նրանց ընտանիքներին վերաբերող բոլոր անհրաժեշտ տվյալներ • Կարգավորված անձնական գործեր	սեպտեմբեր	դասղեկներ ՄԿԱԳՏ Տ	Կատարված է
3.	Ստուգել օրագրերը, կատարել նշումներ:	ընթացիկ	դասղեկներ կազմակեր-պիչ	
4	Կազմակերպել դասարանական ծնողական ժողովներ:Կազմավորել դասարանական ծնողական խորհուրդ:			
5.	Ձեռքի տակ ունենալ աշակերտների զբաղվածության ցուցակները: Իմանալ յուրաքանչյուր աշակերտի նախասիրությունները, հետաքրքրությունները, կարողությունները:	ընթացիկ ընթացիկ	դասղեկներ դասղեկներ	Կատարված է
6.	Հետևել դասարանի և աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին:			
7	Համագործակցել ծնողների հետ, ուսումնասիրել աշակերտների ընտանեկան դաստիարա-	ընթացիկ	դասղեկներ	

8.	Դասղեկական գործունեության խնդիրներ • Դասարանական կոլեկտիվի ձևավորում • Անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող հոգեբանա-մանկավարժական միջավայրի ապահովում • Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում, ֆիզկուլտուրայի դասաժամերին մասնակցության ապահովում • Սովորողի իրավունքներ և պարտականություններ • Դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպում, գրաղվածության ապահովում • Սովորողների, աշակերտների և մանկավարժների միջև բարիացակամ, ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորում • Դասարանի լիդերների բացահայտում • Սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորում	ընթացիկ	դասղեկներ կազմակերպիչ	
9.	Վերահսկել դասղեկական աշխատանքները և դասղեկական պլանում ընդգրկված աշխատանքների անվերապահորեն կատարում	ընթացիկ	ՄԿԱԳՏՏ	

4. ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Ուշադրության կենտրոնում պահել ռազմագիտության դասավանդումը: Նպաստել միջոցառումների կազմակերպմանը:	ընթացիկ	ՄԿԱԳՏՏ	
2.	Ռազմագիտության դասաժամերին հրավիրել Արցախյան շարժման և Մեծ հայրենականին մասնակից վետերանների:		զինղեկ կազմակեր-պիչ	
3.	Կազմակերպել աշակերտների մոտ հայրենա-սիրությունը սերմանող միջոցառումներ, լինել հետևողական:	ընթացիկ	Զինղեկ ՄԿԱԳՏՏ	
4.	Հասնել նրան, որ յուրաքանչյուր աշակերտ իմանա 22 խորհրդանիշները, ազգային հերոս-ներին, երգի օրհներգը:			
5.	Կազմակերպել այցելություններ մոտակա զորամասեր, զինվորական առօրյային ծանոթացնել ապագա զինակոչիկներին:		Զինղեկ	
6.	Մասնակցել միջդպրոցական, համաքաղաքային, հանրապետական տարաբնույթ մրցույթ- միջոցառումներին:	ընթացիկ		
7.	Կազմակերպել ներդպրոցական մրցումներ, այն նախօրոքք համաձայնեցնելով ֆիզկուլտուրայի ուսուցիչների, զինղեկի հետ:		Սարգսյան Լ. կազմակերպիչ	
8.	Հետևել, որ ֆիզկուլտուրայի դասաժամերն անցնեն արդյունավետ, սպորտային համազգեստով:		Սարգսյան Լ. կազմակերպ.	
9.	Կազմակերպել սպորտլանդիաներ	Ընթացիկ		
10.	Կազմակերպել այցելություններ Ստ. Զորյանի տուն-թանգարան, Վանաձորի Պատկերասրահ, գեղագիտական կենտրոն, „Լոռի-Փամբակ" երկրագիտական թանգարան և այլ վայրեր:		դասղեկներ ՄԿԱԳՏՏ	
11.	Կազմակերպել հանդիպումներ քաղաքի հայտնի գրողների, արվեստագետների, մշակույթի գործիչների հետ:		դասղեկներ կազմակերպ. ՄԿԱԳՏՏ	
12.	Անցկացնել կինոդիտումներ տարբեր թեմաներով: Մասնակցել „Ես եմ... Պատիվ ունեմ„ ռազմահայրենասիրական ծրագրին		զինղեկ	

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

1.	Ձեռքի տակ ունենալ աշակերտների և նրանց ընտանիքների մասին հստակ տեղեկատվություն:	Սեպտեմբեր	դասղեկներ կազմակ.	
2.	Թարմացնել դպրոցի ծնողխորհրդի կազմը, յուրաքանչյուր դասարանում ընտրել ծնողխորհուրդ (ծնողխորհուրդը կազմավորել դասարանների ծնողականխորհուրդների նախագահներից)	ընթացիկ	դասղեկներ ՄԿԱԳՏՏ	
3.	Պարբերաբար հրավիրել դասարանական և համադպրոցական ծնողական ժողովներ, սահմանված կարգով ունենալ ժողովի անցկացման հստակ պլան:			
4.	Հասնել նրան, որ ծնողները. • Մշտապես ուշադրություն դարձնեն իրենց երեխաների ուսմանը, դաստիարակությանը, ապահովեն դասագրքերով, աշակերտին անհրաժեշտ գրենական պարագաներով: • Սիստեմատիկորեն ստուգեն օրագրերը: • Մշտապես կապի մեջ լինեն դասղեկի հետ: • Երբեք չխանգարեն դպրոցի աշխատանքներին, օգնեն դպրոցին ըստ հնարավորությունների; • Հետևեն իրենց երեխաների կարգապահությանն ու սանիտարահիգենիկ վիճակին, համազգեստին; • Ծնողների համար սահմանել դպրոց հաճախելու հատուկ օրեր, ժամ: • Ծնողների հետ տարվող աշխատանքներում լինել ազնիվ, արդարամիտ, համբերատար, նրբանկատ, բարեկիրթ: • Մասնակցել դասարանական ծնողական ժողովներին, լսել ծնողներին:	ընթացիկ ընթացիկ	դասղեկներ դասղեկներ	
5.	Կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը	ընթացիկ	դասղեկներ ՄԿԱԳՏՏ	

7.	անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար		ԴԱԿ ՄԿԱԳՏՏ	
8.	Համագործակցել ծնողների հետ՝ երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում			
9.	Հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապի և համագործակցության ապահովում	ընթացիկ		
10.	Դպրոցի ծնողական խորհրդի նախագահին ընտրել կանոնադրության պահանջներին համապատասխան		ՄԿԱԳՏՏ	
11.	Ապահովել հանրակրթական դպրոցի ծնողխորհրդի լիազորությունների իրականացումը՝ կանոնադրության պահանջներին համապատասխան			
	Ապահովել դպրոցի ծնողխորհրդի համագործակցությունը հանրակրթական դպրոցի մանկավարժական և այլ խորհուրդների հետ:		ԴԱԿ ՄԿԱԳՏՏ	

	• Անչափահասը և հանցագործությունը • Աշակերտ – աղանդներ • Բանավեճեր տարբեր թեմաներով		
5.	Այցելություն կազմակերպել. • Ստ. Զորյանի տուն-թանգարան • Վանաձորի պատկերասրահ • «Լոռի-Փամբակ» երկրագիտական թանգարան • Վանաձորի եկեղեցիներ	ընթացիկ	դասղեկներ կազմակերպիչ
6.	• «Կոտրած եկեղեցի» • Սեյսմիկ կայան և այլ վայրեր		
7.	Մասնակցել համաքաղաքային, մարզային, հանրապետական միջոցառումներին:	ընթացիկ	դասղեկներ կազմակերպ
8.	Դպրոցի տարածքի բարեկարգում, կանաչապատում, ծառատունկ		ՄԿԱԳՏ Տ
9.	Հանձնարարել մեթոդմիավորումներին պատրաստել ստենդներ, պատի թերթեր:	Սեպտեմբեր	ՄԿԱԳՏ Տ դասղեկներ կազմակերպ
10.	Հասնել նրան, որ յուրաքանչյուր աշակերտ իմանա ՀՀ օրհներգը և երգի այն:	Սեպտեմբեր	դասղեկներ ՄԿԱԳՏ Տ
11.	Բացահայտել նորեկ աշակերտների նախասիրությունները և կարողությունները, ներգրավել միջոցառումներին:		
	Ամեն երկուշաբթի դասերն սկսել պետական օրհներգով:		ՄԿԱԳՏՏ կազմակերպիչ
12.	Ռադիոհանգույցի նպատակային օգտագործում	ընթացիկ	
13.	Սահմանել - Շաբաթօրյակ - Առաջարկություն անելու օր դասարանի կողմից - Լրատվական հարթակ - Տարաբնույթ մրցումների անցկացում		

7. Covid-19 հակահամաճարակային միջոցառումներ

- Հետևել, որ սովորողները մուտք գործեն դպրոց պա;շտպանիչ դիմակներով
- Կատարել սովորողների և դպրոցի աշխատակիցների ամենօրյա ջերմաչափում և 37 և ավելի ջերմության դեպքում տվյալ անձին մեկուսացնել հատուկ առանձնացված վայրում՝ մեկուսարանում և ձեռք առնել համապատասխան միջոցներ

Հետևել սովորողների սանիտարահիգիենիկ վիճակին

- Սոցիալական հեռավորության պահպանում
- Անձնական իրերի փոխանակում
- Դասարանների պարբերաբար ախտահանում և օդափոխություն
- Անհրաժեշտության դեպքում սովորողի ծնողի հետ կապի հաստատում
- Նախատեսվող միջոցառումների հեռավար անցկացում
- Դասղեկական և ծնողական ժողովների հեռավար անցկացում
- Ուսուցիչների և դասղեկների հերթապահության ամենօրյա հստակ գրաֆիկի սահմանում
- Օրվա հերթապահի և դասղեկների համար հատուկ գործողությունների կանոնների սահմանում
- Բոլոր դասարաններում և տեսանելի վայրերում սովորողի համար դպրոց հաճախելու կանոնները փակցնել

Սովորողի համար կանոններ

1)Բացառվում է սովորողի հաճախումը դպրոց, եթե առկա է ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումը, երբ՝

ա. սովորողն ունի կորոնավիրուսային հիվանդության ռիսկի խմբի հիվանդություններից որևէ մեկը՝ համաձայն << առողջապահության նախարարության կողմից սահմանված ցանկի.

բ. տանն առկա է կամ հայտնաբերվել է կորոնավիրուսային հիվանդության ախտանիշներով կասկածելի կամ հաստատված հիվանդ.

գ. տանն առկա է կորոնավիրուսային հիվանդության ռիսկի խմբի ընտանիքի անդամ, և առկա է համապատասխան ցուցում բժշկական հաստատության կողմից:

2)Այն սովորողների համար, որոնց 1-ին ենթակետով սահմանված դեպքերում ցուցված չէ դպրոց հաճախելը, ուսուցումը կազմակերպվում է հեռավար կամ տնային ուսուցման եղանակով: Հեռավար եղանակով ուսուցումը կազմակերպվում է կենտրոնացված՝ առաջնորդվելով << ԿԳՄՍ նախարարի 20 մայիսի 2020 թ. N 09-Ն հրամանով հաստատված հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգով: Ոչ պետական ուսումնական հաստատությունների պարագայում հեռավար կամ տնային ուսուցումը կարող է կազմակերպվել անմիջապես դպրոցի կողմից:

3)Դպրոցը մինչև ս.թ. սեպտեմբերի 5-ը << կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի Հեռավար ուսուցման կենտրոն է ներկայացնում այն սովորողների տվյալները, որոնց 1-ին ենթակետով սահմանված դեպքերում ցուցված չէ դպրոց հաճախելը:

4)Դպրոց գալուց առաջ ծնողները կամ օրինական ներկայացուցիչները կատարում են երեխայի ջերմաչափում և 37 կամ ավելի բարձր ջերմաստիճան ջերմություն ունենալու դեպքում դիմում երեխայի հաշվառման բժշկական կազմակերպություն և տեղեկացնում դպրոցին՝ երեխայի դպրոց չհաճախելու մասին:

5)Սովորողը դպրոց է գալիս մեկանգամյա կամ բազմակի օգտագործման դիմակով: Մուտքը դպրոց առանց դիմակի արգելվում է: Դիմակ չունեցող սովորողներին դպրոցը մուտքի մոտ տրամադրում է մեկանգամյա օգտագործման դիմակ:

6)Սովորողին կարող է ուղեկցել ոչ ավել, քան մեկ անձ: Ուղեկցողի մուտքը դպրոց արգելվում է՝ բացառությամբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների

7)Սովորողի բացակայության դեպքում դասղեկը այդ մասին տեղյակ է պահում դպրոցի բուժքրոջը կամ տնօրենին, ով իր հերթին տեղեկացնում է տարածքը սպասարկող կամ կցագրված բժշկական կազմակերպությանը:

8)Սովորողներն ընդունում են իրավիճակով պայմանավորված փոփոխությունները, նոր պահանջները և պատշաճ կերպով հետևում դրանց:

9)Սովորողներն աջակցում են հիվանդությունը հաղթահարած և դպրոց վերադարձած ընկերներին:

10)Դպրոցում գտնվելու ընթացքում վարակի համախտանիշների առկայության դեպքում սովորողները տեղեկացնում են ուսուցչին կամ ծնողներին:

11)Սովորողները հետևում են համավարակին վերաբերող հավաստի աղբյուրներից ստացված տեղեկատվությանը:

12)Սովորողներն անձնական օգտագործման իրերով, գրենական պիտույքներով՝ չեն կիսվում դասընկերների հետ:

13)Ծնողներն ամրապնդում են երեխաների ձեռք բերած նոր հիգիենիկ վարքագիծը տանը գտնվելու ընթացքում:

14)Ծնողներն իրականացնում են ծնող-ուսուցիչ համակարգված հաղորդակցություն և աջակցում առողջ և ապահով դպրոցի պահպանմանը:

ՕՐՎԱ ՀԵՐԹԱՊԱՀ

- իրականացնում է սովորողների ջերմաչափում գրանցում
- 37⁰ ջերմության առկայության դեպքում մեկուսացնում է սովորողին
- կապ է հաստատում անհրաժեշտ ծնողների հետ (հեռավար)
- անհրաժեշտության դեպքում կապվում է շտապ օգնության կայանի հետ
- դասպրոցեսի ընթացքում անընդհատ հետևում է սովորողների շարժին և հակահամաճարակային կանոնների պահպանմանը
- թույլատրում է սովորողի մուտքը դպրոց պաշտպանիչ դիմակի առկայության դեպքում
- ստուգում է դասարաններում ախտահանիչ նյութերի առկայությանը
- հերթապահություն է իրականացնում դասապրոցեսի ժամանակ՝ կարգավորում սովորողների
անհետաձգելի տեղաշարժը
- հետևում է միջանցքների, դասասենյակների,կոշտ մակերևույթների ախտանահման
աշխատանքներին
- համագործակցելով դասղեկների նվարչական աշխատողների հետ մասակցում սովորողների
դպրոցից դուրս գալու գործընթացին (դասի վերջում)
-հետևում է որ կուտակումներ չլինեն մուտքի մոտ

ԴԱՍՂԵԿՆԵՐ

- հետևում է սովորողների սանիտարահիգենիկ վիճակին
- պարբերաբար ստուգում է պաշտպանիչ դիմակներ առկայությունը
- պարբերաբար ստուգում և հետևում է սովորողների միջև սոցիալական հեռավորության
ապահովմանը,դասարանում միմյանց հետ շփմանը
- բացատրական աշխատանք է իրականացնում սովորողների և նրանց ծնողների հետ
- անհրաժեշտության դեպքում կապ է հաստատում սովորողի ծնողի հետ
- սովորողի ինքնազգացողության վատացման պարագայում տեղյակ է պահում օրվա
հերթապահին կամ տնօրենությանը
- համագործակցական աշխատանք է իրականացնում ՄԿԱ-ի ՆԴԱԿ-ի հետ
- հետևում է, որ կուտակումներ չլինեն դպրոցից դուրս գալիս և ներս մտնելիս
- պարբերաբար հետևում է դասասենյակի կոշտ մակերևույթների ախտահանմանը
- անհրաժեշտության դեպքում միջնորդում է սովորողների ապահովել դիմակներով
- բացակայելու և կամ հեռավար դասերի ժամանակ հատուկ հերթապահություն է
իրականացնում իր ղեկավարած դասարանում՝ դրա անհրաժեշտության
պարագայում
համագործակցելով ՄԿԱ-ի,ԴԱԿ-ի և ուս. զծով տնօրենի տեղակալի հետ
կազմակերպում այդ
աշխատանքը
-հետևում է սովորողի առողջական վիճակին
- պարբերաբար հետևում է դասարանի օդափոխությանը